



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ԷՆՍԻՆՈՅԻ
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Ս. Յարութեան տօնին յաջորդող Կիրակին Նոր Կիրակի Է, որ կը կոչուի կրկնագատիկ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Նոր Կիրակիին, 1 Մայիսին, պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Թինյ. Խաչատուրեան:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

This Sunday, May 1st, 2011 is the first Sunday after Easter, which is known as New Sunday.

On this day, H.E. Archbishop Moushegh Mardirossian will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

Parish Pastor Rev. Fr. Razmig Khatchadourian will celebrate Divine Liturgy.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀՕՄ-Ի 10ՐԴ ՓԱՌԱՏՈՆԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵ**

ՀՕՄ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան աւանդական տարեկան 10-րդ երկօրեայ փառատօն-տօնակատարութիւնը տեղի կ'ունենայ այս շաբաթավերջին, Կլենտէյլի «Սիվիք» հանդիսասրահին մէջ:

Փառատօսին պաշտօնական բացումը պիտի կատարուի Շաբաթ, 30 Ապրիլի յետմիջօրէին: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ տօնակատարութեան եւ աղօթքով պիտի կատարէ բացումը:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Թորոսեան:

PRELATE TO PRESIDE OVER OPENING CEREMONY OF THE 10TH ANNUAL ARS FESTIVAL

The 10th annual Armenian Relief Society Festival will be held this weekend at the Glendale Civic Auditorium.

On the afternoon of Saturday, April 30th, the Prelate will preside over the opening of the festival and will deliver the invocation and his message.

Rev. Fr. Gomidas Torossian will accompany the Prelate.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՍԱՅԱԹ ՆՈՎԱ» ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԵՐԳ

Կազմակերպութեամբ Համազգայինի Հովիտի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղին, Կիրակի 2 Մայիսի երեկոյեան ժամը 6-ին, ղեկավարութեամբ դաշնակահար Նորա Ռումեան Պայրամեանի, «Սայաթ Նովա» երգչախումբին անդրանիկ համերգը տեղի պիտի ունենայ CSUN Համալսարանի թատերասարահին մէջ, Նորթրիճ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, պիտի կատարէ բացման աղօթքը եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները: Սրբազան Հօր պիտի ընկերանայ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

FIRST CONCERT OF THE HAMAZKAYIN "SAYAT NOVA" CHOIR

The "Sayat Nova" Choir of the Hamazkayin San Fernando Valley "Barouyr Sevag" Chapter will hold its first concert on the evening of Sunday, May 1st, at the CSUN Performing Arts Center.

The Prelate will offer the opening prayer and will deliver his blessings. He will be accompanied by Holy Martyrs Church Pastor Rev. Fr. Razmig Khatchadourian.

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԻ 31ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կիրակի յետմիջօրէին, Սահակ Մեսրոպ Զայ Զրիստոնեական Վարժարանի 31-րդ տարեկան ճաշկերոյթ տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ »Արարատ« Տան Mission Hills-ի Տօքմէճեան սրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան ու գնահատանքի խօսքը:

SAHAG-MESROB SCHOOL 31ST ANNUAL BANQUET

Sahag-Mesrob Armenian Christian School is holding its 31st annual fundraising banquet on Sunday, May 1st, 2011, at the Deukmajian Grand Ballroom of Ararat Home in Mission Hills.

Rev. Fr. Ashod Kambourian will represent the Prelate and convey his blessings and message.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՊԱՏԱՐԱԳԵՑ ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ



Կիրակի, 24 Ապրիլը հայութեան համար իմաստաւորեց կրկնակի յարութիւն: Զրիստոնեայ աշխարհին հետ տօնեցինք Զրիստոսի հրաշափառ Ս. Յարութիւնը, իսկ իբրեւ հայութեան զաւակներ՝ ոգեկոչեցինք յիշատակը մեր նահատակներուն, վերապրեցանք մեր ժողովուրդին յարութիւնը Ցեղասպանութենէն:

Ս. Յարութեան տօնին առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ: Առաջնորդ Սրբազանը՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պատարագեց Կլենտէյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ ու վեր առաւ Ս. Յարութեան տօնին ու Ապրիլ 24ի զուգադիպութիւնը: Ան շեշտեց մահուան վրայ Աստուածորդոյն տարած յաղթանակին խորհուրդը՝ մեղաւոր մարդու փրկութեան ու յաւիտենական կեանքի անոր խոստումը, միաժամանակ վեր առաւ ցեղասպանութեան նախճիրէն հայութեան վերապրումն ու վերածաղկումը, իբրեւ մարմնաւորում՝ քրիստոնեական հաւատքի ու

ազգային ժառանգութեանց հաւատարմութեան: Ան յորդորեց անշեղօրէն քալել Աստուածորդոյն բացած ճամբէն ու իրերայաջորդ սերունդներուն մէջ մարմնաւորուած տեսնել մեր ազգային իրաւունքներուն պայքարի հաւատարմութիւնը:

PRELATE CELEBRATES EASTER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE



On Sunday, April 4th, 2010, the Glorious Resurrection of our Lord Jesus Christ was ceremoniously celebrated with a special Easter Divine Liturgy and joyful proclamations of "Christ is risen from the dead, blessed be the resurrection of Christ".

This year as Easter and the commemoration of the Armenian Genocide coincided, on Easter Sunday the Armenian people also commemorated the memory of our martyrs and the rebirth of our nation.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale and delivered his message on this most joyous occasion.

In his sermon, the Prelate highlighted the message of Christ's Glorious Resurrection and His triumphant victory over death which brings to mankind the promise of salvation and eternal life, and noted that the Armenian people, armed and fortified by the spirit of the Resurrection, rose from the ashes of Genocide and were reborn as a nation. The Prelate urged all to walk faithfully in the path of righteousness of our Lord Jesus Christ, and to see embodied in future generations the spirit of the Resurrection and the spirit of survival of the Armenian people.

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԷՋ

Ինչպէս տօնական այլ առիթներով, նոյնպէս ալ Ս. Յարութեան տօնին, «Արարատ Տան» բնակիչ տարեցները անմասն չմնացին Ս. Յարութեան տօնի մթնոլորտէն ու անոր վերանորոգող ներգործութենէն:



Չորեքշաբթի, 27
 Ապրիլին, Ս. Եւ Անմահ
 Պատարագ մատուցուեցաւ
 «Արարատ Տան» Միշըն
 Յիլզի համալիրի մատրան
 մէջ, Նախագահութեամբ
 Թեմիս քարեմադրութեամբ
 Առաջնորդ, Բարձր. Ս.
 Մուշեղ Արք.
 Մարտիրոսեանի Եւ

մասնակցութեամբ հոգեւորականաց դասու անդամներուն:

Հոգեւորականաց դասը Նախ այցելեց հաստատութեան հիւանդանոցի բաժինը, ուր յատուկ աղօթք կատարեց ու երգեց Ս. Յարութեան տօնի շարականներ. պատուարեալները Ս. Հաղորդութիւն ստացան Եւ վերանորոգեցին մեր եկեղեցական ու ազգային ականքներուն հետ իրենց հաղորդակցութիւնը: Առաջնորդ Սրբազանը քարեմադրութիւններ ու շնորհաւորութիւններ ուղղեց պատուարեալներուն:



Աւելի ուշ,
 հաստատութեան մատրան
 մէջ, Ս. Պատարագ
 մատուցեց Եւ քարոզեց
 Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ.
 Ազնիկեան: Յաւարտ Ս.
 Պատարագի, տեղի ունեցաւ
 հաւաքական
 խոստովանանք, որմէ ետք՝
 տարեցները ստացան Ս.
 Հաղորդութիւն: Չատկուան
 շարականներու
 երգեցողութեամբ Եւ
 ականդական տնօրինեցի
 արարողութեամբ,

Առաջնորդ Սրբազանն ու Հոգեւոր Հայրերը քարեմադրութիւններ փոխանցեցին հաստատութեան բնակիչներուն, պաշտօնէութեան Եւ տնօրէնութեան, ապա հիւրընկալուեցան ճաշով:

Յայտնենք Նաեւ, որ Թեմիս Երիտասարդաց անդամ-անդամուհիներ Աւագ Շաբաթ, 23 Ապրիլի առաւօտուն Նոյնպէս այցելեցին Միշըն Յիլզի «Արարատ Տուն»ը, Եւ շարականներու երգեցողութեամբ, ազգային երգերով ու Նուագով Եւ բանաստեղծութիւններու արտասանութեամբ ուրախացուցին հայ մամիկներու ու պապիկներու սրտերը:

EASTER DIVINE LITURGY AT "ARARAT HOME"

On the morning of Wednesday, April 27th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Easter Divine Liturgy at Ararat Home in

Mission Hills. Prelacy clergy members participated in the Divine Liturgy, which is celebrated each year on this occasion.

Clergy members first visited the nursing facility where they led a prayer service and offered Holy Communion to the residents. The Prelate also conveyed his Easter wishes to the residents.

Divine Liturgy was then celebrated at the Chapel. Very Rev. Fr. Muron Aznikian celebrated Divine Liturgy and delivered the sermon. Residents in attendance received Holy Communion at the conclusion of the service.

The Prelate and clergy were then hosted to a lunch by the directors.

On Saturday, April 23rd, Easter Eve, members of the Armenian Church Youth Association visited Ararat Home where they presented to the residents a program of Easter hymns, traditional Armenian songs, and poetry.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԱՆ 96-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԾ ՄԻԱՅԵԱԼ Ս. ՊԱՏԱՐԱԳ



Երկուշաբթի, 25
Ապրիլին, Մեռելոցի օրը,
առաւօտեան ժամը 11-ին,
Ապրիլեան Նահատակներու
Ոգեկոչման Նուիրուած
հանդիսաւոր միացեալ Ս.
Պատարագ մատուցուեցաւ
եւ հոգեհանգստեան
արարողութիւն
կատարուեցաւ Սրբոց
Ղեւոնդեանց Մայր
Տաճարին մէջ, Պըրպէնք:

Արարողութեանց

իրենց մասնակցութիւնը բերին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Հոգեւորականները:

Սուրբ Պատարագը մատուցանեց եւ սրտի խօսք արտասանեց Թեմիս բարեխնամ Առաջնորդը՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, ապա, սրտի խօսք արտասանեցին Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հոգ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեան եւ Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան հովիւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան, որմէ ետք, Ապրիլեան պատգամը փոխանցեց Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտերեան:

Ս. Պատարագի աւարտին, Մայր Տաճարի շրջափակին մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, Նահատակաց Խաչքարին առջեւ:

JOINT DIVINE LITURGY IN COMMEMORATION OF THE 96TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE



On Monday, April 25th, the 96th anniversary of the Armenian Genocide was commemorated with Divine Liturgy and Requiem with the participation of the Armenian Apostolic, Catholic, and Evangelical Churches.

The service was held at St. Leon Cathedral in Burbank.

Divine Liturgy was celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who

also delivered his message on this occasion. Remarks were then delivered by Very Rev. Fr. Krikor Chahinian and Rev. Joe Matossian, after which H.E. Archbishop Hovnan Derderian, Primate delivered the sermon.

Placing of flowers at the memorial cross-stone in the Cathedral courtyard followed the service.

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՃԱՐԱԳԱԼՈՅՑԸ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ



աւետիսը:

Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութիւնը կանխող Աւագ Շաբաթը իր լրումին կը հասնի Աստուածորդոյն թաղման ու Ս. Յարութեան տօնի նուիրուած արարողութիւններով, որոնց շարքին է Շաբաթ երեկոյ տեղի ունեցող ճրագալոյցի արարողութիւնը եւ Ս. Պատարագ, որուն աւարտին, հաւատացեալները կը ստանան յարութեան

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 22 Ապրիլի երեկոյեան, Թաղման Կարգի արարողութեան հանդիսապետեց Էսսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ եւ տուաւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը: Արարողութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան:

Ան ընդգծեց, որ մեղաւոր մարդուն թողութեան համար Աստուածորդին իր երկրաւոր առաքելութիւնը լիութեան հասցուց չարչարանքով ու խաչելութեամբ, խաչին վրայ մահը դիմաւորելով ու թաղուելով, սակայն երեք օր ետք, մահուան վրայ իր տարած յաղթանակով, ան մարդկութեան բերաւ փրկութեան ու յաւիտենական կեանքի խոստումը:

Առաջնորդ Սրբազանը Ս. Նահատակաց եկեղեցւոյ ծխական համայնքին հետ եղաւ նաեւ Շաբաթ երեկոյ, Ս. Յարութեան տօնի ճրագալոյցին, եւ Ս. Պատարագ մատուցեց ու իր պատգամը փոխանցեց: Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները կատարեցին Ս. Գրային ընթերցումները: Յաւարտ Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւորականներ ժողովուրդին հաղորդեցին բարի լուրը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

GOOD FRIDAY AND EASTER EVE SERVICES



On the evening of Friday, April 22nd, 2011, the burial of our Lord Jesus Christ was commemorated with a solemn service in Prelacy Churches.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the Good Friday service at Holy Martyrs Church in Encino and delivered his message on this occasion. Consul General of Armenia the Honorable Grigor

Hovhannessian attended the service.

In his sermon, the Prelate spoke of the profound depth and meaning of the Good Friday service, stating that this solemn service is a reminder of the extend of God's love towards mankind and the ultimate sacrifice of our Lord Jesus Christ for our salvation.

On Saturday, April 23rd, the Prelate presided over Easter Eve services at Holy Martyrs Church and delivered the sermon. Sunday School students completed the Scripture readings. At the conclusion of Divine Liturgy, the

Jrakalooys service took place, during which the faithful lit candles and exchanged tidings to one another that "Christ is risen from the dead".
